

Ճենովայի դքսութիւնը պետական հրա-
մանադրով այդ կալուածներն ու եկեղե-
ցին յանձնեց Պառնասպիթ կոչուած միա-
բանութեան⁽¹⁾, որուն ձեռքն է այսօր
Հայոց Սուրբ Բարքողիմէոս եկեղեցին:

Եկեղեցին անշուշտ չէ պահած իր նախ-
նական ճարտարապետութիւնը: Վերանո-
րոգեաւ է զանազան անդամներ. երեք
նաւերով ու կամարներով առաստաղը՝
վերածուած է մէկ կամարակապի, եւ մի-
այն աւագ խորանի վրայ բարձրացող գլմ-
բէթը կը պահէ հին հայկական ութան-
կիւնը:

Չկան եղբայր Մարտիրի եւ եղբայր
Կուրիեմոսի շէրիմները. ոչ մէկ հայկա-
կան տապանաքար պահուած է: Նախո-
լէոնի ժամանակ փճացած են թանկագին
զիւանն ու վաւերաթուղթերը:

Հետաքրքիր հայ ճամբորդը յուսախար
պիտի մնայ փնտռելով այս տաճարին մէջ
ազգային հաճելի նշխարներ: Գաւիթին
մէջ պիտի վարդապետանայ տապանա-
քարի մը վրայ աւելի պանդուխտ հայու
մը անունն ու պաշտօնանքը:

Այս է տապան Յայրապետ — ին
Որ է որդի Անանիայ — ին
Սա երկրէն է Գոխտան տան — ին
Եւ ի գեղջէ Նըջնաբերդ — ին
Վաղմանեցաւ Հայոց ք-վ — ին
Հագար հարիւր երեսուն եւ վեց — ին
Եւ Ապրիլի քսան եւ յնգ — ին

(1) 1957ի ընթացքին, Պառնասպիթ Հայրերը տօնե-
ցին այս եկեղեցեան 300ամեակը. յորելինա-
կան հանդէսներուն մաս կազմեց նաեւ հայ-
կական ծէսով հանդիսաւոր սուրբ պատարագ

Ով յանդիպի այս տապան — ին
Հայր մեր յերկինս շնորհ — ին
Վասն սիրուն Բրիտոս — ին

Քանիներ այսպէս տրոտում ճակատա-
դրով, յանձնուած ալիքներու, եկեր եւ
մահացեր են այս օտար հորիզոնին տակ:
Տապանաքարին վերեւ Ս. Բարսեղի վի-
սանդրին դրուած է: Այդ մեծ Հայրապետն
ալ իր անունով առաջնորդեց հալածական
հայ կրօնաւորները այս ամերուն վրայ:
Անոնք դացին, օտարացան, մահացան
պատմութեան թեւերուն մէջ, եւ ինքը
հիմա մինակ է, կը նայի իր մարմարէ
աչքերով անթիւ հաւատացեալներուն ո-
րոնք կը մտնեն այս տաճարը՝ Բրիտոսի
Ս. Դաստառակն համբուրելու, առանց
ճանչնալու անոր Երբեմնի տէրերը եւ ոչ
ալ եղբայր Մարտիրը յիշելու:

Ճենովա քաղաքին արեւելեան կողմը
ծամածուռ արահետ մը կը բարձրանայ
դէպի Մոնթալքոյ կոչուած թաղամասը
եւ կանգ կ'առնէ բարձրադիր հրապարակի
մը վրայ, Ս. Բարքողիմէոս Հայոց եկե-
ղեցիին դրան առջեւ:

Ներկայիս ուրիշ հայ ընտանիք մը կը
բնակի անոր մօտ, բժշկապետ Նուպար
Արսլանեան, եւ ինքն ու իր ընտանիքը կու-
գան երբեմն կարդալու. Սուրբ Բարքողի-
մէոս Հայոց եկեղեցի...:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

մը. այդ առիթով էր որ մեզի հայթայթեցին
սոյն տեղեկութիւնները, քաղելով իրենց դի-
ւանական վաւերաթուղթերէն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԵՐԴԵՐԸ

Հայաստանի բարձրաւանդակը հին դա-
րերէ ի վեր մարտից մը եղած է հիւսիսէն
եւ հարաւէն, արեւելքէն եւ արեւմուտքէն
ներխուժող զանազան ցեղերու արշաւանք-
ներուն դէմ. հոն եկած եւ փչրուած են
անոնք մեր ընդերուն եւ ձորերուն, դաշ-
տերուն եւ գետերուն վրայ բար-
ձրացող բաղամթիւ բերդերուն եւ ամրոց-
ներուն առջեւ. դարեր շարունակ դիմա-
դրած են այս ամրութիւնները թշնամիներ-
ու դրոհին դէմ եւ փառաւոր էջեր թողու-
ցած մեր աւատական պատմական շրջանին
մէջ:

Հայաստանի բերդերը կարեւոր դեր մը
խաղացած են մեր հայ ժողովուրդին ճա-
կատադրական պայքարին մէջ, եւ անոր
գոյութեան եւ պահպանումին մեծագոյն
ազդակներէն մէկը եղած են:

Շատ են Հայաստանի մէջ բարձրացող
բերդերը, չըսելու համար հազարաւոր.
Հայաստանի բերդերը խորագրով պատ-
րաստած մեր ընդարձակ աշխատասիրու-
թեւէն քանի մը նմոյշներ պիտի տանք
հոս:

ԱԳԱՐԱԿԻ ԲԵՐԴԸ

Ագարակ անունով մեր նախնեաց մա-
տենադրութեան մէջ կը յիշուին շատ մը
դիւղեր, զանազան գաւառներու մէջ. այս-
պէս Արարատեան գաւառին մէջ կը յիշ-
ուին նոյն անունով չորս դիւղեր, իսկ
Սիւնեաց աշխարհին մէջ կը յիշուի նոյն
անունով գաւառ մը. այս՝ պատճառ եղած
է չփոթութեան եւ Ագարակ բերդը փո-
խադրուած երբեմն Սիւնիք. սակայն թով-
մա Արծրունիին Ագարակ բերդը շատ ո-

րոշ է որ Կորճէից ձախուկ գաւառի բեր-
դերէն է:

Վասպուրականի Աշոտի որդի՝ Գագիկի
մասին խօսելով կ'ըսէ. «Նախապատուէ
զիւր ազգային ոմն որում անուն էր Գա-
գիկ, տալով նմա զբերդն Ագարակայ, եւ
զգաւառն ձախուկ, եւ զօրագլուխ զնա ի
պարսիցն կացուցանէ մարձի»⁽¹⁾:

Նմանապէս Ապուրուանի տիրապետու-
թեան պատմութիւնն ընելով, կ'ըսէ թէ
«Կոչէ զԱշոտ եղբարբքն հանդերձ ի բերդն
կոտորոց, պատուասիրութեան ինչ աղա-
դաւ: Եւ անդէն ի միում գիշերի վալեալ
կապէ զնոսա եւ յղէ զԱշոտ եւ զԳուրգէն
ի բերդն Նկան կոչեցեալ, եւ տուեալ ի
բանտ պահէ մեծաւ զգուշութեամբ: Իսկ
զԳագիկ խաղացուցանէ ի ձուաշ գաւառ,
յամրոցն Շամիրամ. քանզի իրրեւ զմա-
նուկ տղայ խաբեալ էր զԱշոտ, տալով նը-
մա զբերդն Ագարակայ, հանդերձ ձա-
խուկն կոչեցեալ գաւառաւ, փոխանակ
առնելով զբերդն Նկան»⁽²⁾:

Ըստ այս վկայութեանց, ուրեմն, Ա-
գարակ բերդը կը գտնուի Վասպուրականի
ձախուկ գաւառին մէջ, եւ սահմանակից
է Պարսկահայաստանի⁽³⁾:

Արծրունեաց իշխանութեան բերդերէն
է Ագարակ, որուն շինութեան թուականը
թէեւ չի յիշատակուի մեր պատմութեան
մէջ, սակայն հաւանաբար շինուած է Թ.
դարուն, Արծրունեաց իշխանութեան
փառքի շրջանին:

Ագարակ բերդը սահմանային բերդերէն
ըլլալով Արծրունեաց, շարունակ կոչուե-
րու թատր հանդիսացած է հայերուն եւ
պարսիկներուն միջեւ, եւ ձեռքէ ձեռք
խլուած: Թ. դարուն Շապուհ որդի Մար-

(1) Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Ար-
ծրունեաց, Կ. Պոլիս, 1852, էջ 295:

(2) Անդ, էջ 303:

(3) Բնաշխարհիկ բառ., տպ. Վենետիկ, էջ 5:

մանկին... «Հարահանար նենգութեամբ առեալ էր զբերդն Ագարակայ, և զգաւառն ձախուկ, և և կոկողալիզ յինքնահայեաց ամբարտաւանութեամբ նստեալ յամրոցին, մեծ ոմն զինքն կարծելով»⁽⁴⁾ :

Գաղիկ, Վասպուրականի իշխանը, Սեւեքերիմ Թաղաւորի սերունդէն, այս իմանալով, կը դիմէ զօրքով Շապուհի վրայ և կը պաշարէ բերդը «անճողոպրելի զոլուութեամբ»⁽⁵⁾ : Շապուհ տեսնելով որ պիտի չկարենայ դիմանալ պաշարումին, մանաւանդ որ իր զօրավարներն ալ իր դէմ ելած էին, բերդէն վար կ'իջնէ «յանմերձեանի ծայրից ամրոցին իջեալ անկանի առ ոտս երջանիկ իշխանին Գաղկայ և խնդրէ զարիւն իւր և զիւրոյ աղբին»⁽⁶⁾ :

Գաղիկ Արծրունի պարսիկներու ձեռքէն առնելով Ագարակ բերդը՝ կու տայ զայն իր Աշոտ եղբոր, կը կազմակերպէ անոր պաշտպանութեան տկար կէտերը, և ինքը կը քաշուի Նկան բերդին մէջ, և զայն իր իշխանութեան կեդրոն կ'ընէ : այսպէսով՝ Գաղիկ Արծրունեաց հիւսիսային սահմաններուն վրայ, իսկ Աշոտ՝ հարաւային սահմաններուն վրայ պաշտպանողական դիրքեր բռնած, երկար տարիներ երկիրը խաղաղ կը պահեն :

Սակայն Սելճուկ թուրքերու արշաւանքի շրջանին՝ Արծրունեաց իշխանութեան կացութիւնը բոլորովին կը փոխուի : զիմացէն և կող չորս զօրութեան մը առջեւ Գաղիկ և Աշոտ նեղ դրութեան մը կը մատնուին, սակայն իրենց պաղարկանութիւնը չեն կորսնցնել :

Յաջորդ դարերուն Ագարակ բերդի պատմութիւնը մեզի անծանօթ կը մնայ : Գրիգոր Աստուածաբանի «Ի ծնունդն Քրիստոսի» ճառի մէկ յիշատակարանին մէջ, գրուած 1178-9ին, կը պատմուի թէ

կը խմբուին քանի մը վրացի ապստամբ իշխաններ, և կը պահանջեն Վրաց Գէորգ Գ. Թաղաւորէն որ իշխանութեան կէսը թողու իրենց, «զմահ յանձն առնուն, և ժողովէ յամենայն կողմանց ըզկասկածաւորս և զանկասկածս և նստի ի վերայ ամուր բերդին Ագարակայ...»⁽⁷⁾ : Երկու ամիս պաշարելէ վերջ՝ պատերազմական մեքենաներով վը հարուածէ բերդը, և վտրելով բերդին ջուրը՝ ներսը սով և հիւանդութիւն կ'իյնայ, և ապստամբ իշխանները կը ստիպուին անձնատուր ըլլալ⁽⁸⁾ :

Այս բերդը, ինչպէս կը տեսնուի յիշատակարանի ընթերցումէն, ուրիշ բերդ մըն է՝ Լոռի քաղաքին մօտերը, և մաս կը կազմէ Կիւրիկեան իշխանութեան : Վերոյիշեալ տողերը զմեզ կասկածի տակ կը թողուն, որովհետեւ Լոռիի մէջ Ագարակ անունով բերդ մը գոյութիւն ունեցած չէ, հետեւաբար անուններու շփոթութիւն մը կայ : Գէորգ Վրաց Թաղաւորը ըլլալու է Գաղիկ Բագրատունի՝ որուն դէմ ապստամբեցաւ իր Աշոտ եղբայրը, իր շուրջը հաւաքած ուրիշ իշխաններ, որ հռակ ըստիպուեցաւ տեղիք տալ և հնազանդիլ իր Գաղիկ եղբոր, մինչեւ անոր մահը :

Այս ենթադրութեամբ կարելի է լուծել այս յիշատակարանի անուններու շփոթութիւնը : և ըսել թէ ուրեմն մինչեւ 1178 տակաւին կանգուն էր Արծրունեաց սահմանապահ Ագարակ բերդը⁽⁹⁾ :



ԱՄՈՒԿ կամ ԱՄԻԿ ԲԵՐԴ

Վասպուրականի հին և հռչակաւոր բերդերէն մէկն է, Առբերանի գաւառին մէջ չինուած, բարձր քարաժայռի մը վը

րայ, Վանայ լճին արեւելեան ափին, թերակղզիի մը մէջ, հրաշալի դիրքով և զմայլելի տեսարանով մը : անոր առջեւ կը տարածուի Վանայ լճակը զեղալմայլ, և հեռուն կը նշմարուի Սիւփանի ձիւնապատ զաղաթը :

Այս բերդը սեփականութիւն և պատէ Արծրունեաց իշխանութեան :

Ո՞վ եղած է անոր հիմնադիրը և որո՞ւ իշխանութեան օրով շինուած է, անծանօթ կը մնայ : մեր հին մատենագիրները, Սորենացի և կամ Եղիշէ, և ոչ իսկ անոր անունը կը յիշատակեն, ինչ որ ցոյց կու տայ թէ աւելի վերջին դարերու շինութիւն է :

Թովմա Արծրունի առաջին անգամ զայն կը յիշէ, երբ կը պատմէ թէ ինչպէս Աշոտ իշխանը Ութմանիկ կոչուած այլազգիներուն դէմ պատերազմի կ'երթայ՝ Ռոստոմ բուն դէմ պատերազմի վրէժը և արեան գինը առնելու համար, սակայն բերդը չափազանց անուրիկ ըլլալով չի կրնար տիրել : Երանուրդ փորձ մը կ'ընէ տիրելու՝ Գերենիկ իշխանը, որ անհաւասար կռուի մէջ կը մեռնի, և բերդը կը մնայ այլազգիներու ձեռքը, գրեթէ 100 տարի, մինչեւ որ Գաղիկ Արծրունին իշխանութեան գլուխ կու դայ, 922ին :

Գաղիկ որ կրցած էր Արծրունեաց իշխանութեան գլուխը թաղ կապել, իր իշխանութեան առաջին օրերուն իսկ, երազեց միաձուլ իշխանութիւն մը տեսնել իր մականին տակ : իշխանութեան մը գոյութիւնը Ամուկի մէջ՝ իր սրտին վրայ խոր վէրք մը ունենալու տպաւորութիւնը կը թողուր : մանաւանդ որ անոնք ստէպ իրենց պարիսպներէն դուրս գալով, կ'ապստակէին իր երկրին վրայ և շատ նեղութիւն կու տային : «Եւ մնացեալ բերդն Ամիկ իւրական գաւառուն վէր մեծ էր անթշկելի ի սիրտս իշխանացն Վասպուրականի», կ'ըսէ Թովմա Արծրունի⁽¹⁾ :

Ուստի Գաղիկ խօսքէն գործի կ'անցնի՝

մաքրելու համար այս թունաւոր օձերու բոյնը իր ծոցէն : Կը պատրաստուի, զօրք կը հաւաքէ, և յարձակման կ'անցնի : կը պաշարէ և նեղի կը դնէ գանոնք : սակայն բերդը անուրիկ էր : տեսնելով որ դէնքի ուժով պիտի չկարենայ տիրանալ բերդին՝ խորամանկութեան կը դիմէ : անձրեւոտ գիշեր մը գաղտնի ու գոլաւորազնաց ճամբաներէ անցնելով՝ կը մտնէ գաղտուկ բերդը, մինչ բերդապահները խոր քունի մէջ էին, և ինչպէս կ'ըսէ պատմիչը, «զողանայ զամրոցն և սրախողխող արարեալ զընակիչս բերդին բնաջինջ բառնայ յերկրէ»⁽²⁾ : Գաղիկ լուծած էր իր նախնիքներուն դարաւոր վրէժը : քաջ և պատերազմիկ իշխանները բռնելով պարիսպէն գահալէժ մէկիկ մէկիկ ծովուն ալիքներուն կը յանձնէ, «քարալէժս արարեալ զիշխանս նոցա ի խորս խաղացուցանէ սրտի ծովուն» :

Վերջացած էր պատմութիւնը հօր իշխանութեան մը : Գաղիկ իր երկրին մէջ նոր կեանք մը կը սկսի, շինութեան և բարգաւաճումի նոր դարաշրջան մը կը բանայ Արծրունեաց պատմութեան մէջ, «բազում ծախիւք արուեստաւորօք» կը սկսին շինել երկրին գանապան մասերը :

Թաւրիկի սուլթանը դիւրաւ չէր կրնար մարսել այս ամօթալի պարտութիւնը և բնաջնջումը իր համազգի Ութմաններուն, ուստի ծանր զօրքով իր եղբայրը կը զրկէ Գաղիկի վրայ, Ութմաններու վրէժը լուծելու համար :

Գաղիկ չէր կրնար թողուլ որ անարդել իր հողը ոտք կոխէ Թաւրիկի սուլթանը : իր շուրջը կը հաւաքէ Արծրունեաց բոլոր իշխանութիւնները, և դէմ կ'ելլէ յարձակողին : իր եղբայրը Աղամակերտի մօտ լրտեսելու կը զրկէ սուլթանին բանակը, և քաջ զինուորներով կը բռնէ բարձր լեռներու գագաթը և նեղ կիւրճերը : այս քաջերուն ոգին էր Թաղէոս անունով Ակէացին, որ շատ մը քաջութիւններ ըրած էր

(4) Թովմա Արծրունի, էջ 312 :

(5) Անդ, էջ 312 :

(6) Անդ, էջ 312 :

(7) Ինքիբեան, Ստորագրութիւն Հայաստանի, Վենետիկ, 1822, էջ 148 :

(8) Գ. Յովսէփեան, Յիշատակարանք Զեռադրաց, Անթիլիաս, 1950, էջ 472 :

(9) Հմմտ. Մանանդեան, Քննական պատմ. հայ ժողովրդի, Երևան, 1952, էջ 90-91 :

(1) Թովմա Արծրունի, անդ, էջ 315 :

(2) Անդ,

դանազան կոնկրետ մէջ: Թաղէոս ղերք կը բռնէ Գերատայ դաշտին մէջ եւ զիշե-
րանց կը յարձակի թշնամիին վրայ, չիո-
թութիւն մը կը ձգէ բանակին մէջ եւ ջարդ
մը տալով դաշտը արիւնով եւ զիւրով կը
ծածկէ, եւ անոնց մեծերն ալ զերի բռնե-
լով Գաղիկի առջեւ կը բերէ⁽³⁾:

Այսպէս շուրջ յիսուն տարի Արծրու-
նեաց իշխանութիւնը խաղաղ շրջան մը կը
բոլորէ, կը շինուին վրկին դանազան մա-
սերուն մէջ եկեղեցիներ եւ վանքեր, կը
ծաղկի զիրն ու զբաղանութիւնը:

Գաղիկի մահէն վերջ՝ արարներն են որ
այս անգամ հանդիստ չեն թողուր Ար-
ծրունեաց իշխանութիւնը. կը սկսին խմբ-
բանան արշաւներ երկրին վրայ, եւ ահ ու
սարսափ կը տարածեն ամէն կողմ. կը
վերցուի կեանքի ապահովութիւնը, մին-
չեւ վու դայ Արծրունեաց Սենեքերիմ թա-
ղաւորը, որ չափազանց նեղուած արար-
ներէն եւ անկարող դարձած ինքզինքը
պաշտպանելու, ներքին պառակտումներէ
եւ անմիաբանութենէ իր իշխաններուն,
կորոյն հեռանալ իր հայրենական երկրէն.
Եւ ինչպէս ծանօթ է՝ մասնաւոր համա-
ձայնութեամբ մը երկիրը կը յանձնէ Յու-
նաց կայսեր եւ ինքը կը քաջուի բաղմա-
հաղար ժողովուրդի հետ Սեբաստիա:

Սակայն իր այս որոշումին համակար-
ծիք չէին շատ մը իշխաններ, եւ նոյնիսկ
Արծրունի իշխաններ՝ թաղաւորական
տունէ, որոնք կը մնան հոն՝ շարունակե-
լու համար պայքարը թշնամիներուն դէմ,
«ի սակաւուց մնացեալ էին ի պակասաւոր
իշխանացն հայոց, եւ բռամբ ունէին դա-
մուրն բերդից եւ քարանձաւաց»⁽⁴⁾:

Այս իշխաններէն, որոնք մնացին Վաս-
պուրականի մէջ, էին Սենեքերիմ թաղա-
ւորի երկու թոռները, որոնք «տիրեցին
հայրենի բնիկ գաւառացն իւրեանց Վաս-

պուրականի, եւ ի դիմի հարեալ այլադ-
գեացն՝ ոչ տային թողլ աւերել դաշտարհն,
զի ունէին դանազանաց ամբողջ զՇամի-
րամաշէնն գաւառն Վան, եւ զերկնապիշ եւ
զպարանոցատանջ դանադիկ բերդն զԱ-
միւլ»⁽⁵⁾: Ուրեմն Ամիւլ բերդին կը տի-
րեն 1016էն վերջ Սենեքերիմի Երկու թոռ-
ները, Սենեքերիմ եւ Դերենիկ, եւ այդ
բերդին մէջ վը հիմնեն անկախ իշխանու-
թիւն մը:

Հաւանաբար Դերենիկէն վերջ՝ Ամիւլ
բերդի իշխան հղած է Սենեքիկ կամ Հե-
թենիկ, որ կոչուած է նաեւ «մեծ իշխանն
Վասպուրականի». ասոր որդին էր Թոռ-
նիկ իշխանը, կոչուած «այր հօր»:

Ժամանակ մը բերդիս կ'իշխէ Արդւմսէ
Կիւրապաղատ եւ անոր որդին Ալուզի,
որոնց կը յաջորդէ Սենեքիկ Բ. իշխանը.
որ թուականներուն իշխած են այս իշ-
խանները Ամիւլի, անորոյ կը մնայ. սա-
կայն մենք կրնանք ճշտել անոնց իշխա-
նութեան շրջանը, թուովս Արծրունիի հե-
տեւեալ տուեալէն, որ կ'ըսէ. «ի սոցա
Ժամանակս երեւեցան դանձր աստուածա-
յին Նշանին», 1026ին, ինչ որ կը համա-
պատասխանէ մեր իշխաններուն իշխանու-
թեան շրջանին⁽⁶⁾:

Յաջորդաբար պարսիկ Նյուրուզ իշխա-
նը Ամիւլը կը գրաւէ Սենեքիկի ձեռ-
քէն⁽⁷⁾: Ըստ ձեռագիր յիշատակարանի
մը, գրուած ԺԵ. դարուն, Աքանտար թա-
թար զօրավարը կը գրաւէ Ամիւլը, «զպա-
րանոցատանջ Ամիւլ, եւ զբաղում չարիս
եւ զբառնութիւնս հասոյց»: Իսկ Աքան-
տարէն վերջ Ամիւլը կը գրաւէ Փիր-Ալի
բէկը, որ մէկ տարուան մէջ երեք անգամ
կողոպտած էր Արձէշ եւ Արծկէ քաղաք-
ները⁽⁸⁾:

Փիր-Ալիի խժոժութիւններուն մասին
կը խօսի յիշատակարան մը, գրուած ԺԵ.

դարուն⁽⁹⁾: 1428ին, Ամիւլ բերդի իշխան
կը յիշուի Հանի բէկ Խաֆանտար, որ դէպի
Քաջբերունիք կատարած արշաւանքի ա-
տեն, նաւակներ առնելով կը յարձակի
Լիմ կղզիին վրայ, ուր սպաննած էին
սարսափահար քրիստոնեաները. ասոնց
մէջ էր նաեւ թուովս Մեծոփեցի, որ այս
սրտաճմլիկ տեսարանը կը նկարագրէ:

Այսպէս ուրեմն կրնանք ըսել թէ Լէնկ
Թիմուրի արշաւանքներուն ատեն Ամիւլ
եղած է հայ իշխաններու ձեռքէն, եւ եղած
արարական իշխանութեան մէկ անառիկ
ամբողջութիւն մին:

Հ. Ներսէս Սարգիսեան իր տեղագրու-
թեան մէջ զեղեցիկ կերպով կը նկարագրէ
Ամիւլ բերդի զերքը եւ զեղեցիկութիւնը,
եւ կ'ընդունի որ ան Արծրունեաց իշխա-
նութենէն շատ տարիներ առաջ արդէն
դոյուլթիւն ունեցեր է, եւ զժախտաբար
այսօր այդ վառաւոր եւ անառիկ բերդէն
բան չէ մնացեր. «բայց միայն լոկ ապա-
ռան հազարն եւ զժուրամատոյց»⁽¹⁰⁾:
Ուրեմն հազարն եւ զժուրամատոյց

Ամբողջ որ շինուած է հսկայ ապառաժի

դադաթին վրայ, կ'ըսէ Հ. Սարգիսեան,
սեպացած եւ ամրացած պարիսպները բո-
լորովին անհետացեր են, ամբողջ որ ծո-
վուն մօտն էր, լճակին ջուրերը բարձրա-
նալով ծածկեր են, եւ բերդին մեծ մասը
քանդուեր է, բայց տակաւին ապառաժին
ծայրը զժուրեւանի, կը մնան փոքրա-
տարած հինաւուրց բերդին կտորները:

Հ. Ղուկաս Ինճիճեան Ամիւլը կը հա-
մարի Ուրարտական շրջանին շինուած
բերդ մը, հոն գտնուած բեւեռագիրներուն
համար, որոնց հրատարակութիւնը եւ ըն-
թեքցումը, կ'ըսէ, ապագային մեծ լոյս
պիտի ափռէ այս պատմական բերդին
շուրջ⁽¹¹⁾:

Ամիւլ իբրեւ փոքրիկ գիւղ մը տակա-
ւին մինչեւ վերջերս կը պահէր իր դոյու-
լթիւնը⁽¹²⁾: Վերջին տեղահանութենէն
ետք բոլորովին լքուած եւ քանդուած են
այդ քանի մը տունները. միայն լեռան բար-
ձունքին վրայ ամայութեան մէջ կը հսկէ
Ամիւլ:

Հ. ՄԻԿԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

(9) Անդ, էջ 485:

(10) Հ. Ներսէս Սարգիսեան, Տեղագրութիւն,
տպ. Վենետիկ, 1864, էջ 205:

(11) Հմմտ. Բնաշխարհիկ բառ. տպ. Վենետիկ,
1903, էջ 138:

(12) Ստորագրութիւն հին Հայաստանի, էջ 224-5:



(3) Անդ, էջ 317-318:

(4) Անդ, էջ 343:

(5) Անդ, էջ 344:

(6) Ալպոյանեան, Պատմութիւն Հայաստանի,
տպ. Գահրէ, 1950, էջ 349:

(7) Թուովս Մեծոփեցի, տպ. Փարիզ, 1860, էջ
160:

(8) Լ. Ս. Խաչիկեան, Յիշատակարանք Ձեռա-
գրաց ԺԵ. դարու, տպ. Երեւան, 1955, էջ
347: